

1919 թ. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԿՈՒՎԵՆԸՆ ԳՈՐԻՍԻ ԾՐՋԱՆՈՒՄ

Ա. 3. ՄԻՄՈՆՅԱՆ

Իր ազատության համար Ջանգեզուրի հայության 1918-1921 թթ. հերոսական պայքարի տարեգրության մեջ առանձնանում է 1919 թ. նոյեմբերյան մեծ կոիվը, որն առ այսօր պատմագիտության կողմից հատուկ ուշադրության չի արժանացել:

1919 թ. աշնանը մուսավաթական կառավարությունը նպատակ էր դրել մեծ ուժերով հարձակվել Ջանգեզուրի վրա, գրավել այն, բնաջնջել հայ բնակչությանը և գավառը միացնել Ադրբեջանին:

Այդ նպատակով նախընթաց օրերին Ադրբեջանի բոլոր գավառներում արագորեն կատարվում էր հավաքագրում, կազմավորվում էին զինվորական ջոկատներ, անցկացվում զինավարժություններ:

Հայկական բանակի՝ Ղարաքիլիսայում տեղակայված երրորդ բրիգադի հրամանատար գեղապետ Տիմչենկոն Երևան՝ բանակի հրամանատարին ուղարկած հեռագրով հայտնում էր. «Միլիցիայի գնդի հրամանատարը հայտնել է. «Ղազախից եկած մի հայ հաղորդում է, որ գավառի գյուղական ամեն մի համայնքից այնտեղ է ուղարկվում 100 զինվոր, որ Ղազախի հրապարակին հարակից տները ռեկվիզիցիայի են ենթարկում՝ զորակոչված 7000 զինվորներին տեղավորելու համար»¹:

Հաջորդ օրը Տիմչենկոն նույն հասցեով ուղարկում է երկրորդ հեռագիրը, որում ասում էր, թե նոյեմբերի 2-ին Ղազախից եկած մոլոկան կառապանը պատմել էր, որ այնտեղ 3 ռուս գեղապետի և հինգ տաճիկ սպաների գլխավորությամբ արդեն կազմ ու պատրաստ է ադրբեջանական զորախումբը, և գավառի թաթարական բոլոր գյուղերից Ղազախ են եկել մեծ թվով կամավոր հեծյալներ²:

Նույն ժամանակ ՀՀ արտգործնախարարության գլխավոր քարտուղար Տեր-Հակոբյանը հաղորդում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլովին, որ Ղազախի շրջանում՝ Բաշքենդ գյուղի մոտ, Ադրբեջանը կենտրոնացնում է զորքեր և զինում է տեղի մուսուլմաններին: Հավանաբար, շեշտում էր նա, ադրբեջանցիները ցանկանում են զավթել այդ շրջանի ողջ հայկական մասը, գրավել Գյոլչա 16ի հյուսիսային եզերքը և Ջանգեզուրը կտրել Հայաստանից³:

Հետախուզությունը հաղորդում էր, որ հոկտեմբերի 16-ին իր շտաբով Օուշի է եկել օսմանյան նշանավոր զինվորական գործիչ Նուրի փաշան, որը նույն օրը Խանքենդիում հրավիրել է խորհրդակցություն, ուր քննարկվել էին Ջանգեզուրի դեմ ռազմական գործողություններ սկսելու հետ կապված հարցեր: Խորհրդակցությունից անմիջապես հետո Խանքենդիից դեպի Ջանգեզուր է մեկնել 16 տաճիկ սպա, որոնք, հասնելով նշանակված զորամասեր, անմիջապես սկսել էին զինավարժությունները⁴:

¹ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 22:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 22:

³ Տե՛ս նույն տեղը, թ. 19:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 174:

Միաժամանակ մուսավաթականները լայնածավալ հոգեբանական պատե-
րագմ էին սկսել զանգեզուրցի հայերի դեմ: Սուլթանովի հրամանով Ջանգեզուրը
խաղաղ նվաճելու նպատակով, այնտեղ տարածվում էին երեք լեզվով գրված հա-
զարավոր թողոցիկներ, որոնցում կոչ էր արվում «միանալ Ղարաբաղին և նրա
հետ խաղաղ ու երջանիկ ապրել ազատ ու դեմոկրատական Ադրբեջանում»⁵:

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակի վերջերին Օուշիում ու հարակից տա-
րածքներում արդեն կուտակված էին Ադրբեջանի բանակի կանոնավոր ու ընտիր
խոշոր զորամասեր, որոնցում հաշվվում էր 6000 հետևակ զինվոր, երկու հեծելա-
զորային գունդ՝ 800 թրով, 8 թեթև և 4 հատրիցային հրանոթ, 400 քուրդ հեծյալներ:
Այդ տեղեկությունը Ջանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատար Արսեն
Օահմազյանը ստացել էր Օուշիից⁶:

Այն բանից հետո, երբ բանակը հասավ Ջաբուղի ձորեր, այսինքն՝ Ջանգեզու-
րի մատուցներ, նրա կազմում արդեն կար ավելի քան 15 հազար մարդ, որից
7000-ը կանոնավոր բանակի զինվորներ էին, որոնց միացել էին 5000 քուրդ և Նա-
խիջևանյան 3000 խոովարար⁷: Նույնիսկ այդքանից հետո Ադրբեջանի տարբեր
վայրերից Ջանգեզուրի մատուցներ էին գալիս նորանոր կանոնավոր զորամա-
սեր և հրոսակախմբեր:

Այսպես, Ջանգեզուր-վայոցձորյան զինվորական օկրուգի պետ, գեներալ-
լեյտենանտ Մուվսես Սիլիկյանը ՀՀ զինվորական նախարարին հաղորդում էր, որ
իր ունեցած տեղեկություններով հոկտեմբերի 21-ին Բաքվից դուրս է եկել և Եվլա-
խի վրայով Ջանգեզուրի դեմ բացվելիք կովի ճակատ է ուղարկվել Ադրբեջանի
բանակի 2-րդ դիվիզիան ռուս գեներալ Մակակի հրամանատարությամբ⁸:

Չորամասերն ունեին առատ ուզվածություն, նրանց մեծ մասի հրամանա-
տարները ռուս և տաճիկ սպաներ էին: Ադրբեջանական բանակի ընդհանուր հրա-
մանատարն էր ցարական բանակի հրետանու գեներալ-լեյտենանտ Ալի աղա
Օիլիինսկին:

Ըստ Բաքվի ծրագրի՝ պատերազմական հիմնական գործողությունները
պետք է ծավալվեին Գորիսի շրջանի ուղղությամբ: Այս ճակատում կովի առաջին
խոշոր արդյունքը պետք է լիներ Գորիս քաղաքի գրավումը:

1919 թ. հոկտեմբերի 25-ին Հայաստանի կառավարությունը դիմեց Բաքվում
գտնվող բրիտանական գլխավոր կոմիսարին և ֆրանսիական զինվորական մի-
սիայի ղեկավարին, որպեսզի սրանք, օգտագործելով իրենց հնարավորություննե-
րը, Բաքվի կառավարությունը ստիպեն դադարեցնել զինված ուժերի շարժումը
դեպի Ջանգեզուրի սահմանները: Բայց Երևանից ստացված դիմումը չարժանա-
ցավ նրանց ուշադրությանը:

Ավելին, դաշնակիցների ներկայացուցիչների աչքերի առջև տաճիկ-մուսա-
վաթական շարդարարները ահաբեկչության ենթարկեցին Գանձակի լեռնային
շրջանների Կարաչինար, Գյուլիստան, Ազատ, Խարխասպուտ, Պարիս և հայկա-
կան ուրիշ բնակավայրեր:

Տվյալ իրադրության մեջ Ջանգեզուրի զորքերի գլխավոր հրամանատար
Արսեն Օահմազյանին ոչինչ չէր մնում անելու, քան պատրաստվել դիմադրու-
թյան: Գլխավոր հրամանատարը և Ջանգեզուրի, Ղարաբաղի կառավարման հա-
մար ստեղծված միացյալ շրջանային խորհուրդը ոտքի հանեցին ամբողջ Ջանգե-
զուրը՝ Մեղրին, Ղափանը, Գորիսը, Սիսիանը: Վաշտերը հավաքվեցին գավառի
զինված ուժերի կենտրոնակայանում՝ Գորիս քաղաքում և սկսեցին զինավարժու-
թյուններ: Գորիսը, Հանքերը, Մեղրին, Ղարաքիլիսան հեռախոսային կապ ունեին

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 14:

⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 124:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 174:

բոլոր գյուղերի, իսկ շրջանային բոլոր կենտրոնները՝ Գորիս քաղաքի հետ: Իրենց հերթին սուրհանդակները և դիրքապահ պահակները աչալուրջ հետևում էին թշնամու տեղաշարժերին⁹:

Զանգեզուրի դեմ հարձակում գործելուց մեկ շաբաթ առաջ՝ 1919 թ. հոկտեմբերի 29-ին, ադրբեջանական դիվանագիտությունը կարևոր հաղթանակ արձանագրեց: Այդ օրը Կոստանդնուպոլսում կնքվեց տաճիկ-ադրբեջանական համատեղ «պաշտպանական և հարձակողական» գաղտնի պայմանագիրը, որը հիմնականում ուղղված էր հայերի դեմ: Այդ պայմանագրով Ադրբեջանը բազմակողմանի ռազմական աջակցություն էր ստանալու քեմալական Թուրքիայից¹⁰:

Ավդալարի և Զաբուղի ձորերում կենտրոնացած մուսավաթական զորամասերի առաջատար ջոկատի պետ, ռոտմիստր Իբրահիմբեկովը 1919 թ. հոկտեմբերի 29-ին, 30 հեծյալով մտնելով թուրքաբնակ Զաբուղ գյուղ, այնտեղից անմիջապես պատվիրակներ է ուղարկում սահմանային Տեղ հայկական գյուղ: Սրանք ժամը 14-ին հասնում են Տեղ և իրենց պետի անունից գյուղի կոմիսարից պահանջում ներկայացուցիչներ ուղարկել Զաբուղ՝ նրա հետ բանակցելու:

Այդ մասին գյուղի կոմիսարը շտապ հայտնում է Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհրդին: Մինչ այնտեղից պատասխան կգար, թուրք պատվիրակները հետաքրքրությամբ ուսումնասիրում են փոստային կայանի շենքը և միլիցիայի ուղեկալները:

Շրջանային խորհրդի համաձայնությամբ Գորիսի շրջանի զինվորական ղեկավարությունը Տեղ գյուղի կոմիսարին հանձնարարում է երեք հոգի ուղարկել Զաբուղ: Իբրահիմբեկովը իր մոտ եկած հայ պատվիրակներին հանձնում է մի գրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ես, գլխադասային ջոկատի պետս, գտնվում եմ Ավդալարում: Խնդրում եմ հայտնել ինձ՝ ցանկանու՞մ եք արդյոք ապրել խաղաղ, ճանաչելով Ադրբեջանի իշխանությունը, թե՞ մտադիր եք պատերազմել: Ձեր պատասխանը ես պետք է ուղարկեմ մեր գեներալին»¹¹:

Հայ պատվիրակները գրությունը հասցնում են Գորիս: Արդյունքում Տեղ գյուղում սկսվում են բանակցություններ Զանգեզուրի ներկայացուցիչների և ադրբեջանական բանակի հրամանատարության կողմից այդտեղ ուղարկված պատվիրակների միջև: Վերջիններս կտրուկ պահանջում են առանց որևէ դիմադրության փորձ անելու ճանաչել իրենց կառավարության իշխանությունը Զանգեզուրի վրա:

Տեղեկանալով մուսավաթականների պահանջին՝ գյուղի բնակիչները Գորիս քաղաքից եկած ներկայացուցիչներին առաջարկում են անհապաղ դադարեցնել բանակցությունները և Ադրբեջանից եկած պատվիրակներին ճանապարհ դնել Զանգեզուրի սահմաններից:

Այս ամենի մասին ՀՀ ռազմական մինիստրին անհապաղ հեռագրել էր Գորիսի շրջանի արևելյան հատվածի զորամասի հրամանատար Յապոնը (Հովհաննես Պարոնյան)¹²:

Պատրաստվելով հարձակվել Զանգեզուրի վրա՝ Ադրբեջանը իր ագրեսիան հիմնավորելու համար միաժամանակ դիվանագիտական լարված աշխատանք էր կատարում՝ օգտագործելով կեղծիքների հարուստ զինանոցը:

Այսպես, հոկտեմբերի 30-ին և 31-ին մուսավաթական կառավարությունը բողոքագրեր ուղարկեց Թիֆլիս՝ Անդրկովկասում դաշնակիցների ներկայացուցիչներ՝ ամերիկացի գնդապետ Ռեյին և անգլիացի գնդապետ Ուորդոուպին՝

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 240:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, ֆ. 276, ց. 1, գ. 184, թ. 67, շրջերես:

¹¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 501, անս՝ ֆ. 204, ց.1, գ.134 ա, թ. 31:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 15:

պատերազմական մտայնացումները արդարացնելով նրանով, որ, իբր, ՀՀ կառավարությունը, հակառակ ամերիկյան գնդապետ, Հայաստանում դաշնակիցների գլխավոր կոմիսար Հասկելի հետ ունեցած պայմանավորվածության, զորքեր է մտցրել Ջանգեզուր, որը Ադրբեջանի տարածք է:

ՀՀ արտգործմինիստրության գլխավոր քարտուղար Ա. Տեր-Հակոբյանը նույնների 4-ին այդ մասին տեղեկացնում էր Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին: Ադրբեջանի խաղացած խաղերը Նախիջևանի հարցում*, գրում էր Տեր-Հակոբյանը, անչափ մեծ են Ջանգեզուրի դեպքերին: Հասկելի հետ ունեցած համաձայնությամբ Ադրբեջանը պարտավորվել է զերծ մնալ որևէ ակտիվ քայլերից Ջանգեզուրի դեմ: «Բայց օրերս Ջաֆարովը** հեռագիր է ուղարկել Ախվերդովին***, խնդրելով հաղորդել Ռեյխին, որ այդ համաձայնությունը պետք է համարել չեղյալ, քանի որ հայերը չեն կատարել դրա պայմանները, այն է՝ իրենց զորքերը չեն հանում Ջանգեզուրից: Մինիստրությունը**** նույն օրը գրություն է ուղարկել Ռեյխին՝ բացատրելով, որ հայկական կառավարությունը երբեք այնտեղ չի ուղարկել և այժմ էլ չունի ոչ մի զինվոր, որ այնտեղ եղած ռազմական ուժը տեղի Ազգային խորհրդի կողմից կազմակերպվածն է և ղեկավարվում է իր իսկ կողմից: Անհրաժեշտ է Ռեյխի մոտ բացահայտել Ադրբեջանի կողմից սարքված այդ ողջ կատակերգությունը համաձայնագրի շուրջ և համոզել նրան, որ նա այդ մասին հեռագրի Հասկելին՝ Ջանգեզուրում սպասվող իրադարձությունների կապակցությամբ»¹³:

Թուրքերի հարձակումից ժամեր առաջ՝ նույնների 5-ի առավոտյան, ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը N 148 համակով դիմում է Թիֆլիս՝ Անդրկովկասում բրիտանական գերագույն կոմիսար Օլիվեր Ուորդրոպիին՝ Ջանգեզուրի վրա Ադրբեջանի նոր հարձակումը կանխելու համար:

Խատիսյանը դաշնակիցների ներկայացուցիչներին հիշեցնում էր, որ գերագույն կոմիսար գնդապետ Հասկելի և Կովկասում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ռուկերին փոխարինած (1919 թ. մարտ) գեներալ Կորի միջև ձեռք բերած համաձայնագրով արդեն բավական ժամանակ է, որ Ջանգեզուրի կառավարումը մինչև Խաղաղության կոնֆերանսի համապատասխան որոշումը թողնված է գավառի հայերին՝ հանձին Ջանգեզուրի ազգային խորհրդի:

Ջանգեզուրի դեմ հարձակման մտայնացումներով, գրում էր Խատիսյանը, Ադրբեջանի կառավարությունը սպառնում էր մեծ հրդեհ առաջ բերել Անդրկովկասի ողջ տարածքում՝ խախտելով Փարիզի խաղաղության կոնֆերանսի 1919 թ. հունվարի 24-ի հրահանգն այն մասին, որ վիճելի տարածքների նկատմամբ պետք է բացառվի կողմերից որևէ մեկի ամեն մի ոտնձգություն, և բոլորը պետք է սպասեն Փարիզի խաղաղության կոնֆերանսի վճռին:

Ելնելով դրանից՝ Խատիսյանը Ուորդրոպին խնդրում էր ճնշում գործադրել Ադրբեջանի կառավարության վրա, որպեսզի արյունահեղությունը կանխելու համար կանգնեցվի ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Ջանգեզուր¹⁴:

* Նկատի ունի այն, որ 1919 թ. մայիսին դաշնակիցների կողմից Նախիջևանի երկրամասը Հայաստանի Հանրապետությանը միացնելուց շատ չանցած տեղի մուսավաթական ուժերը Բաքվի աջակցությամբ բարձրացրել էին ապստամբություն, Նախիջևանում զավթել իշխանությունը և այն ազդարարել Ադրբեջանի անբաժանելի մաս:

** Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ:

*** Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ:

**** ՀՀ արտգործնախարարությունը:

¹³ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թթ. 18-19:

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 124:

Օրշտ է, Խատիսյանի դիմումը բավական ուշացած էր, բայց եթե դիմած լի-
ներ ավելի վաղ, հազիվ թե հնարավոր լիներ ադրբեջանական բանակին հետ
դարձնել Ջարուղի ձորից:

Պետք է ասել, որ վրացական կառավարությունը իրադարձությունների զար-
գացմանը հետևում էր մեծ տագնապով՝ երկյուղ կրելով, որ Ջանգեզուրի դեմ
Ադրբեջանի ռազմական գործողությունները կարող են հանգեցնել երկու երկրնե-
րի միջև պատերազմի՝ իր աղետալի հետևանքներով մաս Վրաստանի և ամբողջ
Անդրկովկասի համար:

Դեռևս հոկտեմբերի 24-ին Վրաստանի հանրապետության արտգործնախա-
րար Գեգեչկորին շտապ հեռագիր էր հղել Երևան՝ Հայաստանում Վրաստանի
դիվանագիտական միսիայի ղեկավար Մախարաձեին՝ հայտնելով, որ «Բաքվից
Աշիբակը»^{****} հոկտեմբերի 22-ին հեռագրով հաղորդել է (Վրաստանի արտգործ-
նախարարին - Ա. Ս.), որ գեներալ Օիլիխնսկու ղեկավարությամբ Ջանգեզուրի
մատուցներում են գտնվում Ադրբեջանի բանակի ամենաընտիր զորամասերը:
Ադրբեջանի զորքերը ճանապարհ են ընկել դեպի Ջանգեզուր ամսի 19-ին, մնա-
ցած զորամասերը կշարժվեն առաջիկա օրերին՝ Գյանջա-Թարթար-Աղղամ-Օու-
շի-Գորիս գծով: Գորիսում կա հայկական երկու զումարտակ՝ 4 հրանոթով՝ բեկ
Փիրումովի հրամանատարությամբ: Ադրբեջանական զորքերը 10 օրից կարող են
լինել [նշանակված] տեղում: Ընդհարումն անխուսափելի է: Խնդրում են բոլոր մի-
ջոցները ձեռք առնել պատերազմը կանխելու համար: Մենք Ադրբեջանի կառա-
վարությանը հասկացնել ենք տվել, որ ընդհարումը չկանխելու դեպքում դա
կդառնա անմիջական պատճառ ողջ Անդրկովկասի կործանման համար»¹⁵:

Ստանալով այս հեռագիրը՝ Մախարաձեն անմիջապես պատասխանում է.
«Ձեռնարկում են բոլոր միջոցները Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղ ելքի
համար, բայց հույսը փոքր է: Անհրաժեշտ է գործել Թիֆլիսում և Բաքվում և հա-
մոզել ամերիկացիներին՝ ժամանակավոր կառավարչություն ստեղծել Ջանգեզու-
րում»¹⁶:

Հայ-ադրբեջանական հնարավոր լայնածավալ պատերազմի հանդեպ վրա-
ցիների տագնապը զուր չէր: Ջանգեզուրի դեմ նետելով իր բանակի ամենամար-
տունակ կանոնավոր զորամասերը՝ Ադրբեջանը թուլացնում էր երկրի հյուսիսա-
յին սահմանները Դեմիկիհի կամավորական բանակի սպառնալիքի առկայության
պայմաններում: Ռուս գեներալը Անդրկովկասում հակառակորդներ էր դիտում
Ադրբեջանին և Վրաստանին և գործերի հաջող դասավորվելու դեպքում ծրագրել
էր երկրամասում վերականգնել ռուսական տիրապետությունը՝ հարվածի համար
թիրախներ ընտրելով ամենից առաջ Աշված երկու հանրապետությունները:

Կամավորական բանակը Անդրկովկասի սահմաններին մոտենալու դեպ-
քում, բնականաբար, իրենց ռազմական ուժերը նրա դեմ պիտի նետեին և՛ Ադրբե-
ջանը, և՛ Վրաստանը: Վրացիների համար պարզ էր, որ Ադրբեջանը, ձեռք չքաշե-
լով Ջանգեզուրից և զորքեր կենտրոնացնելով այդ զավառի մատուցներում,
փաստորեն մերկացնում է իր հյուսիսային սահմանները:

Ընդամիս, ադրբեջանական զինված ուժերը թուլացնելու համար գեներալ Դեմի-
կինը հրամայել էր այնտեղ ծառայության անցած ռուս զինվորականներին, առա-
ջին հերթին բոլոր սպաներին թողնել իրենց ծառայությունը թշնամական երկրի
բանակում և անցնել իր տրամադրության տակ:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգու-
լովն այդ օրերին իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում նշում էր, որ
Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ գեներալ Ուորդոնի հետ ունեցած

**** Ադրբեջանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 21:

¹⁶ Նույն տեղում, թ. 22:

գրույցի ժամանակ վերջինս զայրույթ է արտահայտել, որ Դեմիկիմի կամավորական բանակը սպառնում է Ադրբեջանի անկախությանը: «Դաշնակիցները թույլ չեն տա, - ասել էր նա, - որ Դեմիկիմը ռազմակալի Ադրբեջանը: Բանը հասել է նրան, որ գեներալը իր հրամանով կարգադրել է բոլոր ռուս զինծառայողներին հետանալ Ադրբեջանից»¹⁷:

Դեպքերի նման զարգացումից խիստ անհամազուտացած՝ Վրաստանի կառավարությունը դիմում է նորանոր քայլերի:

Արտգործնախարար Գեգեչկորիմ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հանձնում է գրություն՝ իր կառավարությանը փոխանցելու համար:

Գրության մեջ նորից ասվում էր, որ Վրաստանի կառավարության ունեցած տեղեկությունների համաձայն՝ Ջանգեզուրի գավառում զարգացող իրադարձությունները անխուսափելիորեն առաջ են բերելու պատերազմ: Վիճելի հարցերի լուծման նման եղանակը, խախտելով խաղաղության ամրապնդման և տեղծագործ աշխատանքի՝ Անդրկովկասի ժողովուրդների ձգտումը, անպայման կունենա կործանարար ազդեցություն երիտասարդ երեք հանրապետությունների ընդհանուր ճակատագրի վրա, որոնց գոյությունը դեռևս չի ստացել պաշտոնական միջազգային ճանաչում և հավելյալ օղակ կավելացնի ողբերգական երևույթների այն շղթային, որն օգտագործելով՝ ընդհանուր թշնամիները ցանկանում են նրանց վարկաբեկել քաղաքակիրթ աշխարհի աչքում: Այդ հանրապետությունների միջև նոր ընդհարումներն անվստահության և արդարացի նախատիքների հավելյալ առիթ կտան նրանց, որոնց ձեռքին է համաշխարհային քաղաքականության կշեռքը:

Միայն Անդրկովկասի ժողովուրդների փոխադարձ համագործակցության, միասնաբար գործելու, ներքին խաղաղության հաստատման միջոցով հնարավոր կլինի հաղթահարել այն մեծաթիվ խոչընդոտները, որոնք սպառնում են նրանց անկախ քաղաքական գոյությանը, կենսագործել իրենց արդարացի պահանջները և թշնամիներից խլել այն գեները, որով նրանք վարկաբեկում են երեք ժողովուրդների բարի անունը:

Ելնելով այդ սեմեհից՝ Գեգեչկորիմ գտնում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ամեն ինչ անեն, որպեսզի բանը չհասնի արյունահեղության: Գրության վերջում տեղեկացվում էր, որ մամօրինակ նոտա է ուղարկվել նաև Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին¹⁸:

Գեգեչկորուն ուղարկած պատասխան գրության մեջ Ա. Խատիսյանը նշում էր, որ իր կառավարությունը լիակատար համաձայնություն է տալիս այն տեսակետին, որ անդրկովկասյան կառավարություններն իրենց միջև եղած հակասությունները պետք է հարթեն միայն ու միայն բանակցությունների միջոցով և ջանքերը կենտրոնացնեն խաղաղ տնտեսական ու կուլտուրական շինարարության վրա: Բայց, ցավոք, գրում էր նա, Ադրբեջանի կառավարությունը դեռ չի հասունացել ըմբռնելու այդ պարզ ճշմարտությունը և շարունակում է իր զավթողական քաղաքականությունը Ջանգեզուրի հանդեպ՝ այդ նպատակին հասնելու համար ծառայեցնելով նաև զավառի մուսուլմանական բնակչությանը: Խատիսյանը հիշեցնում էր, որ Հայաստանի կառավարությունը նախկինում բազմիցս դիմել է Ադրբեջանի կառավարությանը՝ նրան կոչ անելով ճատել կլոր սեղանի շուրջ և հարցերը քննարկել փոխադարձ համդորժողակնության պայմաններում, բայց այդպիսի առաջարկներին այդ կառավարությունը պատասխանել է նոր հարձակումներով Ջանգեզուրի վրա¹⁹:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 4047, գ. 1, գ. 540, թ. 1:

¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, գ. 1, գ. 131, թ. 11-ի շրջերես:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, գ. 1, գ. 131, թ. 16 և շրջերես:

Դիվանագիտական լարված աշխատանքը արդյունք չտվեց:

Նոյեմբերի 5-ին¹⁹ լույսը դեռ չբացված, ադրբեջանական բազմաճյուղավոր քաղաքացիական պատերազմի արդյունքում զոհված զինվորների վրա՝ նպատակ ունենալով ընկճել և իրեն ենթարկել նրա հերոս ու խրոխտ ժողովրդին:

Միաժամանակ թուրք հրոսակախմբերը Նախիջևանի կողմից հարձակում գործեցին վայոց ձորի վրա՝ նպատակ ունենալով այդտեղ կտրել հայերի դիմադրությունը և Սիսիանի կողմից դուրս գալ զավառի արևմտյան սահմանները Զաքուղի կողմից հարձակվող ադրբեջանական զորքերի հետ՝ աքցանի մեջ առնելու համար Գորիսի ու Սիսիանի շրջանները:

Առաջինը Զաքուղ գետն անցան և Գորիսի ուղղությամբ առաջացան այն հետևակ զորամասերը, որոնք կրում էին Զաքաթալայի, Գանձակի, Զեվանջիի և Շեքիի գնդեր անունը: Դրանց հետ էին մոտ 800 հեծյալ և 400 քուրդ ձիավոր: Այդ զորամասերի ռազմական գործողություններն անմիջականորեն ղեկավարում էին գեներալ Եղիզարովը և նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի եղբայր Սուլթան բեկ Սուլթանովը²⁰:

Թուրք հրամանատարության օպերատիվ ռազմական պլանի համաձայն հարձակումը կատարվում էր երկու թևով՝ աջ կամ հյուսիսային և ձախ կամ արևելյան թևերով:

Իր ձախ (արևելյան) թևում թշնամին բռնեց լայն ճակատ՝ Տեղ-Կոռնիձոր գյուղերի հատվածում: Ա. Շահմազյանը այս ճակատի հրամանատար էր նշանակել փորձված զինվորական, ցարական նախկին բանակի սպա Խաչատուր Մալինյանին:

Ադրբեջանի զորքերի հարձակումն առաջինն իր վրա վերցրեց Տեղ գյուղը: Հակառակորդի թնդանդանները գյուղի վրա կրակում էին դիմացի Բոմբի բլրի հետևից: Հրետանակոծությունն այնքան ուժեղ էր, որ հայ մարտիկները չէին կարողանում դուրս գալ խրամատներից: Թուրք հրետանավորները, որոնց ընդհանուր ղեկավարը ռուս սպա Կուզնեցովն էր, քաջալերվելով թնդանդանները առաջ քաշեցին և ուղղակի դաշտից կրակելով՝ քանդեցին գյուղի տներից շատերը²¹: Քանի որ թուրքերի թնդանդանները մեծ էին, իսկ հայկական կողմի երեք թնդանդանները՝ փոքր, այդ իսկ պատճառով հարկ եղավ դիմանալ նրանց հրետանակոծությանը մինչև մույթը վրա հասնելը, որի ընթացքում ծրագրված էր անցնել հակահարձակման: Բայց, օգտագործելով ուժերի գերակշռությունը, հակառակորդը, այնուամենայնիվ, կարողացավ գրավել Կոռնիձոր գյուղը:

Մարտերն այս ճակատում տևեցին չորս օր: Չնայած թուրքերի քանակական գերակշռությանը՝ Գորիսի կադրային զորամասերը Տեղ, Կոռնիձոր, Քարաշեն, Խնձորեսկ և շրջանի մյուս գյուղերի գյուղացիական ջոկատների հետ Արսեն Շահմազյանի, Ռուբեն Նարինյանի, Զախար Տեր-Ղազարյանի, Համբարձում Սարգիսյանյանի և մյուսների հմուտ ղեկավարությամբ մեծ համատեղությամբ դիմադրություն ցույց տվեցին մուսավաթական «վայրի դիվիզիայի» զորամասերին և կանգնեցրին նրանց առաջխաղացումը:

¹⁹ Հրապարակի վրա եղած գրականության մեջ, չգիտես ինչու, նշված է, որ ադրբեջանական բազմաճյուղավոր բանակի հարձակումը Զանգեզուրի վրա սկսվել է 1919 թ. նոյեմբերի 1-ին (տե՛ս, օրինակ, Սիմոն Վրացեան, Հայաստանի հանրապետություն, երրորդ տպագրություն, տպ. «Ալիք», Թեհրան, 1982, էջ 333 և այլն): Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ թշնամու հարձակումը սկսվել է նոյեմբերի 5-ին:

²⁰ Տե՛ս «Борьба», № 263, 18 ноября 1919 г.:

²¹ Տե՛ս Գասպար Գասպարյան, Հիշողություններ (Ս. Խանգաղյանի առաջաբանով ու մեկնություններով): Օտրունակություն, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3 /91/, 1991, էջ 212-213:

իրենց փալլուն դրսևորեցին 9-րդ լեռնային մարտկոցի հրետանավորները, որոնք դիպուկ և անվրեպ կրակով ոչնչացրին թշնամու համարյա ողջ թնդանդթախումբը: Դա սարսափի մատնեց թուրքերին և քաջալերեց Ջանգեզուրի մարտիկներին՝ նրանց մղելով առաջխաղացման:

Չնայած հայերի համատ դիմադրության շնորհիվ թուրքերը այս ճակատում դադարեցրին առաջխաղացումը, բայց շարունակում էին ամրանալ Տեղ-Կոռնի-ձոր գյուղերի միջև ընկած ընդարձակ տափարակում:

Թշնամին ավելի մեծ հաջողության հասավ իր աջ (հյուսիսային) թևում: Այստեղ հայերը ստիպված էին հակառակորդին հանձնել Խոզնավար, Բայանդուր և Խնածախ գյուղերը և նահանջել Գորիս քաղաքը հյուսիսից շրջափակող սարերի ուղղությամբ՝ Հովվի բլուր - Մաղատ սար (Քաչալ դաղ) - Գառնակ լիճ (Ղազի գյուղ): Բայանդուր - Խոզնավարի ձորերից մինչև Գառնակ լիճ 7-8 կիլոմետր էր:

Այս ուղղությամբ շարժվող թշնամու զորախումբը առաջանալով պետք է շրջանցեր Մաղատ սարից Գորիս տանող ճանապարհը և գրոհով իջներ քաղաքի արևմտյան կողմում տարածվող Եռաբլրի սարահարթը, որից հետո, առանց կանգ առնելու, մտներ Միսիանի շրջանի Աղուդի, Վաղուդի և Որոտանի կիրճի մյուս թուրքական գյուղերը, պապ գետի հովտով թեքվելով հարավ-արևելք՝ միանար Բարգուշատում գտնվող մուսավաթական մյուս զորամասերին և այդպիսով արջանի մեջ առներ Գորիսը՝ այն կտրելով Միսիանի շրջանից:

Մի պահ ոմանք հուսահատվեցին, և թվաց, թե Ջանգեզուրի կենտրոն Գորիս քաղաքը փրկելն անհնար է: Ծանր կացություն և դժվարին հոգեբանական վիճակ ստեղծվեց նաև Ջանգեզուրի զինված ուժերի հրամանատարության շրջանում: Արսեն Օահմազյանը նույնիսկ մտածում էր Գորիսը դատարկել բնակչությունից և շտաբը տեղափոխել այլ տեղ, քանի որ քաղաքը գտնվում է փոսորակում և խիստ աննպաստ է պաշտպանության համար: Բայց տատանողական վիճակը կարճ տևեց: Նրա մոտ եմ գալիս Միշա Պարոնյանը և Նիկոլայ Հովսեփյանը՝ խորհրդակցելու: Որոշվում է թշնամուն թույլ չտալ մոտենալու քաղաքի բարձունքներին:

Քաջ զանգեզուրցին, որ ամիսներ շարունակ զենքը ձեռքին իր սարերն ու ձորերն էր պաշտպանում, հավաքեց իր ուժերը: Ամբողջ չորս օր Ջանգեզուրի լեռներում որոտում էին թնդանդթներն ու գնդացիները:

Ջանգեզուրի զինված ուժերի ընդհանուր հրամանատար Արսեն Օահմազյանի հանձնարարությամբ Միսիանում տեղակայված հայկական զորամասերի և աշխարհագրորային ջոկատների մի մասը Պողոս Տեր-Դավթյանի հրամանատարությամբ փակեց Մաղատ սարից դեպի Եռաբլրի սարահարթը իջնող ճանապարհը, իսկ հիմնական ուժերը կենտրոնացան Նախիջևանին հարող տարածքներում՝ այնտեղից հնարավոր հարձակումները կասեցնելու համար:

Դեպի Եռաբլուր տանող սարահարթի ճանապարհը փակած Միսիանի ուժերը կատաղի կոփվ տվեցին հակառակորդի դեմ և նրան ստիպեցին մտնել պաշտպանական դիրքեր: Պողոս Տեր-Դավթյանն առաջավոր գծում էր և անձնական օրինակով ոգեշնչում էր մարտիկներին*****:

Մյուս կողմից Գորիս քաղաքից դեպի հյուսիս մեկնած ջոկատը Նիկոլայ Հովսեփյանի գլխավորությամբ թուրքերի դեմ կռվի ճակատ բացեց ճաղատ սարի արևելյան կողմից: Վճռական պահին անգնահատելի դեր կատարեց կապիտան Սիմոն Մելիք-Հարությունյանը (Թոփչի Սիմոն), որն իր թնդանդթային մարտկոցով կատարած դիպուկ հարվածներով ցարցուցրիվ էր անում հակառակորդի դիրքերը:

Կռվի երկրորդ օրը Արսեն Օահմազյանը Երևան է հայտնում հետևյալը.

..... Չոր չէ, որ Միսիանի ժողովուրդն իր խիզախ հրամանատարին մկրտել էր «Քաջ Պողոս» անունով: Նա այն բացառիկ հերոսներից էր, որոնք լեգենդ են դառնում դեռևս իրենց կենդանության օրոք:

«Չնայած հակառակորդի գերակշիռ ուժերին, նրա գնդացրային և ուժային թօժօին հարվածներին, մերոնք համառ դիմադրում են թշնամու ճնշմանը: Խոզնավարի ուղղությամբ թաթարները նահանջելով Մաղատ սարից, թողել են յոթ գնդացիր: Գերի ընկած ասկյարի պատմելով՝ հակառակորդն ունի վիթխարի ուժեր»²²:

Նույն օրը ճակատի հատվածներից մեկում սպանված ռուս ապայի մոտ գտնվել էր մի քարտեզ, որի վրա մանրամասն նշված էին Գորիսի շրջանում ադրբեջանական զորքերի շարժման ուղղությունները, այդ ուղղություններով հարձակվող զորամասերի անուններն ու համարները և նույնիսկ ունեցած գնդացիրների ու հրանոթների թիվն ու տեսակները: Քարտեզը Չանգեզուրի հրամանատարությանը շատ օգնեց զորքերի տեղաշարժերի միջոցով ժամանակին փակել թշնամու հարձակման ուղիները:

Կովի հետագա ընթացքի վրա մեծ ազդեցություն գործեց դեռևս 1918 թ. աշնանը Սիսիանի ժողովրդական կամավորներից Պողոս Տեր-Դավթյանի կազմած հեծելախումբը՝ քաջ ու առնական, ածրահա ուժի տեր երիտասարդ Ջաքոյի գլխավորությամբ: Գիշերով երկար ռազմերթ կատարելով՝ հեծելախումբն անցավ Ջաքուղ-Ավաղյար շրջանի թիկունքը և կովի երրորդ օրը լույսը չբացված, հանդուգն ու անսպասելի հարվածներով խուճապի մատնեց թուրք զորամասերին, որոնք լքեցին իրենց պաշտպանած հատվածները և ցրվեցին տարբեր ուղղություններով:

Առավոտյան կողմ Մաղատ սարի և Հովվի բլրի տարածքների ադրբեջանական ուժերը, չդիմանալով հայկական ուժերի հզոր հարվածներին, թողեցին մարտադաշտը և սկսեցին անկանոն նահանջել դեպի Գառնակ լճի տարածքը, բայց այստեղ նրանք ամրանալ չկարողացան: Սեպանև խրվելով հակառակորդի դաժնավորության մեջ՝ հայկական ուժերը դիպուկ հարվածով նրան դուրս քշեցին դիրքերից: Թուրքերը խուճապով սկսեցին իջնել նախօրյակին իրենց գրաված Խոզնավար և Բայանդուր գյուղերի հատվածը: Այստեղ հանդիպելով հայկական վաշտերի փոթորկալի կրակին՝ թուրք ծեծված զորամասերը փախան Ջաքուղի ձորերը: Ադրբեջանական զորքերը ջարդվեցին նաև Տեղի և Կոռնիձորի մոտ, որտեղ ամբողջովին ոչնչացավ 2-րդ ձիավոր գունդը²³:

Խայտառակաբար փախուստի դիմած և եկած ճամփով գլխիկոր հեռացած ադրբեջանական բանակը կովի դաշտում թողեց շուրջ 500 դիակ, իսկ թե քանի հարյուր սպանվածների թուրքերն ու քրդերը տարան իրենց հետ, հայտնի չէ: Վիթխարների թիվը, հավանաբար, պակաս չէր 2000-ից: Ավելի քան 150 ասկյար գերի ընկավ: Հայերի ձեռքն անցավ մեկ թնդանոթ, 20 գնդացիր, հարուստ ռազմավար²⁴:

Նահանջող զորամասերը վրեժ էին լուծում իրենց ճանապարհին հանդիպած հայ գյուղերից, կոտորում բնակիչներին, ավերում շինությունները: Միայն Օուշի-Եվլախ ճանապարհին նրանք սպանեցին ավելի քան 400 միանգամայն անմեղ հայերի²⁵:

Չանգեզուրի հաղթական զավակները վերադառնում էին տուն՝ հպարտ իրենց կատարած պատմական գործով: Վերադառնում էին խոր կսկիծով նաև, քանի որ կովի դաշտում ընկել էին տասնյակ անմեծ հերոսներ՝ իրենց կյանքի գնով փակելով թշնամու ճանապարհը հայրենի լեռնաշխարհի սահմաններից ներս:

Չանգեզուրը մի անգամ էլ փրկվեց մահացու վտանգից՝ շնորհիվ իր զավակների հերոսական ճիգերի:

²² ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 25:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 72:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 24, թ. 2:

Գործիս կռիվն մասնակցած բարձրաստիճան թուրք զինվորականներից շատերը խոստովանում էին, որ իրենցից «ոչ ոք չէր կարծում, թե Ջանգեզուրում կարող էր այդքան կազմակերպված և ուժգին դիմադրության հանդիպել»²⁶:

Բաշ զանգեզուրցիների սխրանքները աղբրեջանական գործի ու բնակչության մեջ խոր համոզմունք առաջացրեց, որ Ջանգեզուրի դեմ գնացողը այլևս չի վերադառնա:

Գործիս հերոսական էպոպեան հյուսվեց առաջին հերթին հազարավոր շարքային զինվորների սխրանքներով: Կռիվը ղեկավարող Ջանգեզուրի գործերի ընդհանուր հրամանատար Արսեն Ծահմազյանի շուրջն էր համախմբված քաջագուն հայորդիների մի փայլուն համաստեղություն՝ Ջանգեզուրի նահանգապետ Սերգեյ Մելիք-Յուլյանը, Սիսիանի զինուժի հրամանատար, Ղափանի Խոտանան գյուղից Պողոս Տեր-Դավթյանը, շուշեցի գնդապետ Ռուբեն Նարիճյանը, հրանոթային անձնակազմի հրամանատար, Վայոց ձորի Սերս գյուղի ծնունդ Սիմոն Տեր-Հարությունյանը (Թուփչի Սիմոն), գործախցիներ՝ Տաթևի վանքի վանահայր Հովհաննես Տեր-Գրիգորյանը, գնդապետ Դոնդարովը, Մելիք Օհանջանյանը, Միքայել (Միշա) Պարոնյանը, Ջաքար Յույանը, Հովհաննես Պարոնյանը (Յապոն), Ջաքար Տեր-Դավթյանը, Խաչատուր Մալինջյանը, Ղազար Մալունցը և շատ ուրիշներ:

Ա. Ծահմազյանի և գործերի հրամանատարության կողքին էր Ջանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդը՝ Արշակ Ծիրիճյանի գլխավորությամբ: Խորհրդի անդամները՝ Նիկոլայ Հովսեփյանը, Գեղեոն Տեր-Մինասյանը, Հակոբ Տերունին և մյուսները, ռազմաճակատի ամենավտանգավոր հատվածներում էին, իրենց ոգեշունչ խոսքով մարտիկներին մղում էին խիզախումների, նրանց հետ գրոհի գնում ուխտերիմ թշնամու դեմ:

Ծանր պարտությամբ վերջացավ նաև Նախիջևանից թուրք-տաճիկ զորամասերի հարձակումը Վայոց ձորի վրա՝ այնտեղից Ջանգեզուրը շրջապատելու և Հայաստանի հանրապետությունից կտրելու համար: Գործողության ռազմական օպերատիվ պլանը կազմել էր ցարական բանակի հեծելազորային գործերի գեներալ-լեյտենանտ Հուսեյնխան Նախիջևանսկին: Նրա ղեկավարությամբ և Վայոց ձորի մուսուլմանական գյուղերի ակտիվ մասնակցությամբ նախիջևանյան թուրք-տաճիկական ուժերին հաջողվում է գրավել Սուլթան բեկ ու Փաշալու հայ գյուղերը, ապա առաջ անցնելով՝ ջանքեր են թափում ռազմակալելու ողջ գավառը:

Հարձակումը, լինելով աղբրեջանական կանոնավոր զորամասերի կողմից Ջանգեզուրը գրավելու ընդհանուր ծրագրի մի մասը, հայկական կողմին հարկադրեց թշնամուն հետ մղելու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ և գրավել գավառի առավել խոցելի տեղերը²⁷:

Ջանգեզուրի ազգային խորհրդին ուղղած հեռագրով ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը գրում էր.

«Ջանգեզուրի վերջին հերոսական կռիվների առթիվ հանրապետության կառավարությունն իրեն պարտք է համարում շնորհավորել Ջանգեզուրի քաջարի մարտիկներին և ազատատենչ ժողովրդին այն փառավոր հաղթանակների համար, որ տարան իրենց ստրկացնել ցանկացող թշնամիների դեմ: Կառավարությունը սրտատրոփ հետևում էր կռիվների ընթացքին և հիացմունքով տեղեկանում հայ մարտիկների հերոսություններին, որոնք գալիս էին մի ավելորդ անգամ ևս հաստատելու Ջանգեզուրի հայ ժողովրդի ռազմական ոգին և նրա անհողորդ կամքը՝ ազատ ապրելու:

Հանրապետության կառավարության անունից սրտագին ողջունում են հանձին խորհրդիդ՝ Ջանգեզուրի քաջարի ժողովրդին և հերոս ռազմիկներին»²⁸:

²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 131-ի շրջ.:

²⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 108:

²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս II, թ. 373:

Աղոթեջանի շախչախված բանակը նոր էր փախել Չարուղ գետի մյուս ափը, երբ Վրաստանի արտգործնախարար Գեգեչկորիճ, նոյեմբերի 6-ին իր մոտ հրավիրելով այդ երկրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, տագնապ է հայտնում, որ եթե Ջանգեզուրի հայերը շարունակեն հարձակողական գործողությունները, պապ Վրաստանի կառավարությունը երկյուղում է, որ ծայր կառնի հայ-աղոթեջանական լայնածավալ պատերազմ, որը դամոկլյան սրի պես կկախվի Անդրկովկասի երեք հանրապետությունների գլխին՝ սպառնալիքի տակ դնելով նրանց անկախ գոյությունը:

Վրաստանի կառավարության մտահոգությունների առթիվ հայկական կողմի տեսակետը պարզորոշ արտահայտվել էր Հ. Յ. Դաշնակցության բանվորական ներկայացուցչական խորհրդի նիստում 1919 թ. նոյեմբերի 7-ին: Նիստում, որը նախագահել էր խորհրդի նախագահ Լևոն Օսանջը, լսվել էր վարչապետ Ա. Խատիսյանի զեկուցումը ներկա քաղաքական պահի մասին և ընդունվել էր բանաձև, որի 3-րդ և 4-րդ կետերը պատասխան էին վրացական կառավարությանը:

Այնտեղ ասված էր.

«3. Տարիներ շարունակ պաշտպան կանգնելով հայ ժողովրդի անկախության և ազատության, նույնը ցանկացել ենք նաև իրականացնել մեր հարևան բոլոր ժողովուրդների համար: Եվ այսօր էլ, պաշտպան կանգնելով մեր երկրի անկախության, նույնը հայ դեմոկրատիան ցանկանում է և՛ Վրաստանին և՛ Աղոթեջանին: Այսօր և հետագայում ցանկանում ենք լինել հաշտ և բարի հարևանական հարաբերության մեջ, որն արդեն իրականացած է Վրաստանի հետ:

4. Խորհուրդը, ողջունելով հայ-վրացական դաշինքը, իր սրտանց ողջույն է ուղարկում վրաց դեմոկրատիային, իր բարեկամական բազուկն է մեկնում նրան հանուն երկու երկրների ազատության, խաղաղության և դաշինքի անխախտ պահպանման՝ հույս հայտնելով ու ձգտելով հետագայում էլ բոլոր խնդիրները լուծել նույն ճանապարհով»²⁹:

Չհաշտվելով դառը պարտության իրողության հետ՝ մուսավաթականները մեծ աղմուկ և վայնասուն բարձրացրին: Բաբուն դիմեց Անտանտի ներկայացուցչի, Գերագույն կոմիսար գեղապետ Հասկելին՝ բողոքելով, թե Ջանգեզուրի հայերն իրենց հարձակումներով շարունակում են ավերել թուրքական գյուղերը: Աղոթեջանի կառավարությունը Գերագույն կոմիսարից պահանջում էր ազդել հայերի վրա, որպեսզի նրանք դադարեցնեն իրենց հարձակումները:

Դիմելով Հայաստանի կառավարությանը՝ Հասկելը պահանջեց ամենախիստ միջոցներով կանխել ընդհարումների նոր փորձերը: Ի պատասխան Հասկելի պահանջի՝ նրան ուղարկվեց ոչ միայն կառավարության պատասխանը, այլև բանվորական ներկայացուցչական խորհրդի նշված նիստի ընդունած բանաձևը, որ նաև ասված էր.

«... Յուրաքանչյուր ժողովուրդ պետք է լինի ազատ իր ազատ հայրենիքում, նրանց շարքում և հայ ժողովուրդը պետք է ունենա իր ազատ հայրենի հողը՝ որպես երաշխիք ազատ աշխատանքի, որ նա կարողանա կառուցել իր անկախ պետական շենքը և որպես հիմքը այդ պետության, նա պետք է ունենա իր տերիտորիան»³⁰:

Ապա բանաձևը, անդրադառնալով հայ-աղոթեջանական հարաբերությունների վիճակին, արձանագրում էր. «Ձգտելով հայ-աղոթեջանական բոլոր վեճերը լուծել խաղաղ ճանապարհով, խորհուրդը հավատում է, որ Աղոթեջանի դեմոկրատիան ընդառաջ կգնա Հայաստանի աշխատավորությանը՝ գտնելու մի ընդհանուր լեզու՝ հանուն Անդրկովկասի հանրապետությունների խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի և Անդրկովկասի պետությունների անկախության և անարգել

²⁹ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 130 և շրջերես:

³⁰ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 130:

գարգազման»³¹: Իսկ եթե Ադրբեջանի իշխանությունները չհասկանան, որ գեներլ ուժով անհնարին է Հայաստանից խլել Ջանգեզուրը, ապա նորանոր աղետներ կբերեն հենց իրենց ժողովրդին: Բանաձևը, անդրադառնալով Ջանգեզուրի վրա Ադրբեջանի կատարած հարձակմանը և այն դիմադրությանը, որ ցույց տվեց նրա աշխատավոր գյուղացիությունը, ողջույն ուղարկեց լեռնաստանի հերոսական ինքնապաշտպանական բանակին: Բանաձևը հայտարարում էր.

«Ջանգեզուրը, իր իսկ ժողովրդի ցանկությամբ, լինելով Հայաստանի հանրապետության անբաժան մասը, կատանա նրա պաշտպանությունը իր բովանդակ ուժերով: Կառավարությունը կձգտի խաղաղ ու անարյուն լուծել հայ-ադրբեջանական վեճերը, իսկ եթե դա չհաջողվի, ապա ամեն գնով պաշտպան կկանգնի Ջանգեզուրին՝ իր հետ ունենալով հայ աշխատավորության բովանդակ ուժերը»³²:

Վարչապետ Ոստրբեկովը նոյեմբերի 14-ին հայտարարում էր, որ իր կառավարությունը երբեք «Հայաստանին թույլ տալ չի կարող խառնվել մեր ներքին գործերին, ինչը մենք համարում ենք Ջանգեզուրի հարցը»³³:

Միաժամանակ մուսավաթական իշխանությունները փորձեր էին անում դաշնակից տերությունների ներկայացուցիչների մոտ սպավորություն ստեղծելու, թե նախահարձակը իրենք չեն եղել, այլ հայերը:

Արտաքին գործերի նախարար Ջաֆարովը, փորձելով քողարկել իրականությունը, նոյեմբերի 17-ին պաշտոնական հայտարարությամբ ժխտում էր Գորիսի ուղղությամբ մուսավաթական զորամասերի հարձակումը Ջանգեզուրի վրա և պարտությունը: Այդ հայտարարության մեջ նա նշում էր. «Ջանգեզուրի դեմ Ադրբեջանի կողմից չեն ձեռնարկվել ուղղակի գործողություններ, քանի որ այն Ադրբեջանի հանրապետության անբաժանելի մասն է: Պարզապես ադրբեջանական կառավարությունը նպատակ ունի դադարեցնել հայերի կողմից Ջանգեզուրի մուսուլմանական գյուղերի ավերումը և 6000 թշվառացած գաղթական մուսուլմաններին վերադարձնել իրենց օջախները»³⁴:

Բաքվի բողոքի հիման վրա Թիֆլիսից գնդապետ Հասկելը Հայաստանի կառավարությունից հեռագրով պահանջեց հետ կանչել Ջանգեզուր ուղարկած ռազմական ուժերը և դադարեցնել թուրքական գյուղերի ավերումները³⁵: Նա հաշվի չէր առնում, որ հարձակվողները եղել են մուսավաթական զորքերը: Ինչ վերաբերում է Հայաստանի հանրապետության կողմից Ջանգեզուր ուղարկած զորամասերին, ապա դրանց միակ նպատակը եղել է Հայաստանին պատկանող գավառի պաշտպանությունը:

Ադրբեջանի պառլամենտում չէին դադարում ընդդիմադիր ֆրակցիաների անդամների կողմից կառավարության հասցեին արվող քննադատությունները: Սրանք հարցապնդումներ էին անում պարզելու, թե ինչպես է պատահել, որ ռազմական մեծաքանակ զենք-զինամթերք ունեցող բազմահազարանոց բանակը ջախջախիչ պարտություն է կրել՝ տալով հսկայական կորուստներ:

Կառավարությունը թե՛ պառլամենտում և թե՛ մամուլի էջերում ստիպված դիմում էր ուղղակի խաբեության՝ թաքցնելով իր կորուստների իրական պատկերը³⁶:

Բաքվում լույս տեսնող «Օբնովլենիե» թերթի նոյեմբերի 26-ի համարում մեծ ուշացումով տպագրվել էր կառավարական հաղորդագրություն, ուր նշվում էր, որ «բոլշևիկյան-անարխիստական տրամադրություններով տոգորված դաշնակցական

³¹ ՀԱՍ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 130:

³² Նույն տեղում, թ. 130-ի շրջերես:

³³ ՀԱՍ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 31:

³⁴ Մոցիսի-քաղաքական պատմության ռուսական պետական արխիվ (ՍՏՊՌՊԱ), ֆ. 76, ց. 2, գ. 16, թ. 9:

³⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 92, թ. 24:

³⁶ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 121 և շրջերես:

քանդաների կողմից Ջանգեզուրում ավերված մուսուլմանական գյուղերի ավելի քան 6000 փախստականներին իրենց բնակության վայրերը վերադարձնելու, ինչպես նաև Ադրբեջանի այդ տարածքում օրինական կարգը վերականգնելու համար ընդամենը մի փոքրաթիվ զորամաս առաջացել էր Գորիս քաղաքի ուղղությամբ»։ Այնուհետև թերթը շարունակում էր. «Ջանգեզուրում կարգը վերականգնելու համար այնտեղ ուղարկված զորամասը, բարձրանալով Տեղ գյուղի տարածք, այնտեղ նկատում է ամրացված դիրքեր։ Նրանցում դիրքավորված զինված մարդիկ հանկարծակի սկսում են գնդակոծել խճուղին, որով առաջ էր շարժվում զորքը։ Մեր պահանջին՝ ազատ ճանապարհ բաց դնելի Գորիս քաղաք, դիրքերում գտնվող բանդան հրացանային կրակ է բացում։

Այդ պահին լուր է ստացվում, թե Խճածախ և Խոզնավար գյուղերի կողմից շարժվում են հրետանի ունեցող հայկական կանոնավոր զորամասեր։ Այդ լուրը մեր ջոկատի հրամանատարին ստիպում է նահանջել դեպի Ավդալար, որը հրետանակոծության է ենթարկվում հակառակորդի կողմից։ Մեր հրետանին պատասխան կրակ է բացում և կանգնեցնում թշնամու առաջխաղացումը։

Տեղի ունեցած ընդհարումների ժամանակ մեր ջոկատը տալիս է 1 սպանված և 4 վիրավոր, իսկ Խճածախի ուղղությամբ մեզանից սպանվել ու վիրավորվել է 10 մարդ։ Հայկական զորամասերը մարտի դաշտում թողել են 40 դիակ, իսկ Տեղ գյուղի դիմաց՝ 30 դիակ։ Այնուհետև՝ Առյուծբերի 8-ից մինչև այժմ որևէ մարտական գործողություն տեղի չի ունեցել»³⁷։

Բայց իրողությունը թաքցնել չէր հաջողվում։ Կառավարության հասցեին քննադատությունները չէին թուլանում, իսկ հասարակությունը չէր հանդարտվում։ Ի վերջո Ադրբեջանի կառավարությունը հրաժարական տվեց, և կազմվեց նոր կաբինետ, ուր գերակշռում էր մուսավաթի աջ թևը, իսկ ոչ մի սոցիալիստ այնտեղ չկար.....:

Ջանգեզուրի հայերի տարած փախյուն հաղթանակը մեծապես ոգեշնչել էր արցախահայությանը և, ընդհակառակը, խիստ տագնապեցրել մուսավաթականներին, որոնք սպասում էին նոր ցնցումների։ Նրանք քաջ գիտակցում էին, որ իրենց կողմից Արցախի հայերի ժամանակավոր «հնազանդեցումը» չի կարող երկար տևել, և որ, միևնույն է, նրանք մեծ գլխացավանք են պատճառելու իրենց։ Ուստի Բաքվի կառավարիչները մտահոգացան հրապարակ բերել մի անսպասելի առաջարկ։ Ադրբեջանի կառավարության անունից Սուլթանովը Ղարաբաղի հայոց ազգային խորհրդին առաջարկեց արցախահայերին տեղափոխել Նախիջևան, իսկ այդտեղի թուրք բնակչությանը՝ Ղարաբաղ, քանի որ վերջինս կապված է Ադրբեջանի, իսկ Նախիջևանը՝ Հայաստանի հետ։ «Այդ միջոցով միանգամից կլուծվեն և Ղարաբաղի և Նախիջևանի հարցերը»³⁸, - ասում էր նա։

Դաշնակիցների ներկայացուցիչները «հարցի լուծման» այդ տարբերակը բացառված չէին համարում։

Մինչ դաշնակիցները խաղաղության կեղծ թե անկեղծ կոչեր էին անում, իսկ Ադրբեջանի նոր կառավարությունը դարձյալ Ուսուրբեկովի գլխավորությամբ Ջանգեզուրի վրա հարձակումների հերթական ծրագրեր էր մշակում, գավառի հարավարևելյան ռազմաճակատի հրամանատար Գարեգին Նժդեհի կազմակերպած ու կոփած կապարգողության (Կապան + Արևիք + Գողթն) գործը պատրաստվում էր հրաշագործությունների, որոնց շնորհիվ արմատապես փոխվելու էին մշտապես թշնամուց պաշտպանվող հայերի պատկերացումներն իրենց ռազմական ունակությունների ու հնարավորությունների մասին։

³⁷ "Обновление", 26 ноября 1919 г.

..... Նոր կաբինետում վարչապետը և ներքին գործերի մինիստրը Ուսուրբեկովն էր, արտաքին գործերինը՝ խան Խոյսկին, արդարադատությանը՝ Խաս-Մամեդովը, ֆինանսների և առևտրա-արդյունաբերության մինիստրը՝ Մամեդ-Հասան Հաջիբնևկին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, թ. 32)

³⁸ ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 151:

А. Г. СИМОНЯН - Ноябрьские бои 1919 года в Горисском районе. - В летописи героической борьбы зангезурских армян за свое освобождение особое место занимает большое ноябрьское сражение 1919 года, которое до сих пор мало изучено историками.

Осенью 1919 года мусаватистское правительство подготовило большую военную интервенцию на Зангезур, имея в виду уничтожение местного армянского населения и присоединение уезда к Азербайджану.

С этой целью во всех уездах Азербайджана происходила ускоренная мобилизация, организовывались военные отряды, происходили учения.

В конце октября 1919 года на подступах к Зангезуру сконцентрировалось около 15.5 тыс. солдат. Они имели отличное вооружение, достаточное количество боеприпасов, офицеры были в основном русские и турки. Командовал всеми азербайджанскими соединениями генерал-лейтенант артиллерии царской армии Али ага Шихлинский.

Правительство республики Армения неоднократно обращалось к представителям Великобритании и Франции в Закавказье с просьбой оказать давление на мусаватистское правительство с целью прекращения азербайджанской агрессии против Зангезура. Однако все эти просьбы ни к чему не привели.

В создавшейся ситуации главнокомандующему войск, находящихся в Зангезуре, Арсену Шахмазяну, ничего не оставалось, как готовиться к отражению нападения. Планируя нападение на Зангезур, Азербайджан провел усиленную дипломатическую работу, использовав богатый арсенал всевозможных фальсификаций.

Первый удар азербайджанских агрессоров приняли на себя приграничные села Горисского района Тех, Корнидзор, Хознавар, Баяндур и Хнацах.

После упорных боев на правом фланге общего наступления азербайджанские агрессоры создали непосредственную угрозу взятия города Гориса.

Однако на помощь защитникам города поспешили отряды самообороны Си-сиана. Вражеским войскам с тыла нанес удар также отряд горисских ополченцев и артиллеристов.

После многодневных упорных боёв враг был отброшен назад. Скоро отступление азербайджанских войск превратилось в беспорядочное бегство.

Благодаря беспримерной храбрости своих сыновей Зангезур в очередной раз был спасен от смертельной опасности.

Мусаватистское правительство всячески старалось скрыть поражение собственных войск, однако азербайджанская оппозиция, используя бесславный результат военной интервенции, добилась отставки кабинета.

События осени 1919 года положили начало блистательным победам зангезурских армян в борьбе против азербайджанских захватчиков за присоединение уезда.